ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ Արաքս ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<< 17 > հունվարի 2017 թ. *N 01-Ն*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ասման Ասատրյան / /
Գրիգոր Հովսեփյան / /
Սևակ Կիրակոսյան / /
Գևորգ Գրիգորյան / /
Սմբատ Մելքոնյան / /
Արկադի Մանուկյան / /

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / / **Վ. Գրիգորյան**

2017 թվականի հունվարի 12-ի
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝համայնքի ղեկավար Վ.Գրիգորյան

Հաստատվել է համայնքի ավագանու N-01 նիստով

Գ.Արաքս 2017թ

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արմավիրի մարզի Արաքս համայնքը գտնվում է Արմավիրի մարզի Էջմիածնի տ/շ Արաքս սահմանային գետի և Սև ջուր գետերի միջև, մերձարաքսյան սահմանամերձ գոտում, որը ՀՀ մայրաքաղաքից գտնվում է 35 կմ, մարզկենտրոնից 37կմ շրջկենտրոնից 17 կմ հեռավորության վրա:Արաքս համայնքի ընդհանուր հողային տարածքը կազմում է 1290 հա, որից բնակելի տարածքը 125 հա է, բնակչությունը 2050մարդ: Բնակչության հիմնական զբաղվածությունը հողագործությունն է և անասնապահությունը: Վարելահողերի շուրջ 600-700 հա չի մշակվում ջրի սակավության պատճառով, դրան ավելացրած որ այն գտնվում է սահմանամերձ գոտում ,որտեղ գործում է սահմանային ռեժիմի օրենքը և բնակիչները չեն կարողանում ճիշտ կազմակերպել հողագործության աշխատանքները:Համայնքը ունի մշակույթի տուն որը վերանորոգման կարիք ունի, որտեղ և տեղավորված է Համայնքապետարանի աշխատակազմը: Համայնքը ունի մանգապարտեզ որը չի գործում, հիմնանորոգման կարիք ունի: Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որը վերանորոգման կարիք ունի: Այս բոլորի պատճառով որևէ դաստիարակչական մշակութային երիտասարդների հետ տարվող աշխատանքներ չեն իրականացվում:Ներհամայնքային ճանապարհները անմխիթար վիճակում են և ամենամյա վերանորոգման կարիք ունեն: Գյուղը մայրաքաղաքին կապող տրանսպորտային կապ չկա, իսկ շրջկենտրոնին կապող տրանսպորտային սպասարկումը բավարար չէ, քանի որ այդ երթուղին սպասարկողները տեսնում են իրենց շահերը:Համայնքը ունի բուժ.կետ ամբուլատորիա,որը շենք չունի տեղակայված է մշակույթի տան շենքում, անհրաժեշտ է կառուցել բուժ.կետ:Համայնքը ունի պատմա-մշակութային հուշարձան, որը գտնվում է գյուղի կենտրոնում,նվիրված հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակին: Ստեփան Շահումյանի հուշարձանը տեղադրված է դպրոցի բակում:Համայնքում գործում են 4 առևտրի կետեր,որոնք զբաղվում են պարենային և տնտեսական ապրանքների վաճառքով:Համայնքը գազաֆիկացված չէ:Համայնքը չունի կենցաղի տուն: Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից,որը ունի աշխատակազմ, տեղակալ, աշխատակազմի քարտուղար, գլխավոր մասնագետ, առաջատար մասնագետ,1-ի կարգի մասնագետ, //կրթ և մշակույթ// մ/տ տնօրեն, հաշվապահ, հավաքարար:Համայնքը ունի գույք, մշակույթի տուն,մանկապարտեզ ,հուշարձան, գերեզմանատուն, գյուղ տեխնիկա:Համայնքը ունի մարզադաշտ,սպորտ հրապարակ,որը նորոգման կարիք ունի:Այս բոլոր թվարկածների լուծման համար անհրաժեշտ են պետական մոտեցումներ և դրամական միջոցներ, իսկ համայնքի բյուջեի միջոցները բավարար չեն այս հիմնախնդիրները լուծելու համար :

1.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 43258,0 հազար դրամ,որից համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 26% : Համայնքի հիմնական գյուղտնտեսական արտադրանքը գյուղ. մթերքներն են և անասնապահությունը,որի սպառման շուկաներն են մայրաքաղաքը և շրջանները: Համայնքը ունի պատմա-մշակութային 2 հուշարձան: Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 40 ընտանիքներ:

1.2ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ և ՄԱՐԶԱՅԻՆ,ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ և ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ և ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համայնքիվարչական տարածքում պետության կողմից հանրապետական և մարզային ծրագրերի շրջանակներում նախատեսվում են ծրագրեր, որոնք ուղղված են համայնքի գազաֆիկացմանը, մանկապարտեզի հիմնանորոգմանը,մշակույթի տան և դպրոցի վերանորոգմանը:

Միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են շփումներ հարևան համայնքների հետ, որոնք կապված են համայնքի գազաֆիկացման խնդիրների հետ, սպորտի զարգացման և երիտասարդների դաստիարակության հետ,փորձի փոխանակման հետ:

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ, ԳՆԱՀԱՏԱԿԱՆ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի ֆինանսական միջոցները գոյանում են հիմնականում սեփական եկամուտներից և պաշտոնական տրանսֆերտներից (դոտացիա) սեփական եկամուտներ 26% որը կազմում է 12մլն դրամ դոտացիա31 մլն դրամ:

Հ Հ Զ Ծ-ն կազմված է 5 տարվա կտրվածքով ելակետային հիմք ընդունելով 2016թ համայնքի բյուջեով նախատեսված եկամուտները և ծախսերը, հաշվի առնելով համայնքի համար առաջնային խնդիրների լուծումը:

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆԵՐ

1.Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրությանխթանումը

_գործարար միջավայրի և ձեռնարկատերերի անհամաձայնությունը , որոնք գործում են իրենց շահերից:

2.Նախադպրոցական ,կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.

_ Նշված հիմնարկների ղեկավարների անտարբերությունը ծախսված միջոցների անհամատեղելիությունը, գերիշխող դեր ունենալը , կազմակերպչական սխալները:

3.Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը երիտասարդությանեներգրավմամբ:

_ Մշակույթի տան գույքի և մարզական գույքի բացակայությունը :

_ Մշակույթի տան վիճակը և ներքին կահավորությունը:

_ Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրները:

4.Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը .

_ համայնքի բյուջեի սոցիալական նպատակով ուղղված դրամական հատկացումները, դոնոր կազմակերպությունների բացակայությունը , պետական հատկացումները,բնության կողմից պատճառված վնասների փոխատուցման բացակայությունը բնակչության անվճարունակությունը:

5.Ֆիզիկական կուլտուրայի առողջ ապրելակերպի խթանումը:

_ Սպորտային հրապարակների բարեկարգման աշխատանքների բացակայությունը ոչ ճիշտ կազմակերպումը, դրամական միջոցների հատկացումները,գույքի բացակայությունը:

6.Համայնքում բնակարանային շինության խթանումը.

_Համայնքի բնակչության աղքատության վիճակը

_Դրամական միջոցների հայթայթումը

_ Հիպոտեքային վարկերի բացակայությունը

_ Վարկերի տրամադրման պայմանները:

8. Համայնքի հասարակական տրանսպորտի կազմակերպումը, համայնքային ճանապարհների ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը:

_ Համայնք մտնող ճանապարհների գծատերերի անհամաձայնությունը

_ Հանրապետական և միջհամայնքային նշանակության ճանապարհների անսարքությունները.

9. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչությանպաշպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը:

_ Համապատասխան ինժեներական, էվակուացման անհրաժեշտ տեղնիկայի , մեքենաների բացակայությունը:Կարկտային կայաների ոչ ճիշտ ժամանակին օգտագործումը:

_ Քաղ. պաշտպանության միջոցների բացակայությունը:

10.Գյուղական բնակավայրը ընդգրկող համայնքներում գյուղատնտեսությանզարգացման խթանումը:

_ Սահմանային ռեժիմը

_ Ոռոգման ջրի սակավությունը

_ Գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը:

11.Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների կազմակերպում:

_ Հասարակական օբյեկտների բացակայությունը :

_ Աշխատատեղերի բացակայությունը:

_ Գործազրկություն:

12.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանունումը:

_ Համայնքի բնակիչներին անհատույց տնամերձ հողամասեր հատկացնելը :

_ Արտագաղթը

_Գործազրկությունը

13. Համայնքի բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում:

- Բուժ. ամբուլատորիայի շենքի բացակայությունը:

_ Բուժ.ամբուլատորիայի, բժշկական սարքավորումներով հագեցվածությունը :

_ դեղորայքի սակավությունը :

_ գույքի պակասը:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները

_ Հեռախոսակապի առկայությունը:

_Առնտրի հիմնական օբյեկտների առկայությունը:

_Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը:

_ Համայնքի կենտրոնական փողոցի ասֆալտապատ լինելը:

_Համայնքի բնակչության աշխատասիրությունը, նվիրվածությունը, հոգատարությունը, միասնությունը:

Համայնքի թույլ կողմերն են

_ Ներհամայնքային և միջհամայնքային փողոցների վատ վիճակը :

_Գործազրկության մակարդակը:

_ Սոցիալապես անապահով բնակչության տոկոսը :

_Բնակչության ծայրահեղ աղքատների տոկոսը:

_Բնակչության անվճարունակությունը :

_ Գազաֆիկացման բացակայությունը:

_Ոռոգման ջրի սակավությունը:

2.1 Համայնքի հնարավորությունները

_ մեծ աշխատուժի առկայություն:

2.2Համայնքին սպառնացող վտանգները

_ հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են ներկայացնում (սպառնում) համայնքի բյուջեի կատարմանը:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի ռազմավարություն

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական,մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ , բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:

3.2Առաջին 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են (ՀՀՋԾ)

ա)Համայնքի գազաֆիկացում:

բ)Համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում:

գ) Համայնքի մշակույթի տան վերանորոգում:

դ) Հանդիսությունների սրահի կառուցում:

ե) Համայնքապետարանի շենքի կառուցում:

զ) Բուժ.ամբուլիատորիայի շենքի կառուցում:

է)Ջրահեռացման ջրատարների կառուցում:

ը) Սպորտային հրապարակների կառուցում

թ) Ներհամայնքային ճանապարհների նորոգում

ժ) Համայնքի էլ. ցանցի ընդլայնում

ի) Բնակչության սոցիալական բեռի թեթևացում

լ) Նոր աշխատատեղերի ստեղծում

խ)Հանրային տրանսպորտի կազմակերպում

3.3 Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում

Համայնքի հեռահար նպատակն է (տեսլական) համայնքի բնակչության բարեկեցության աճը , կուլտուր-կենցաղային պայմանների բարելավումը,գյուղատնտեսական մթերքների արտադրության աճը,մանկապարտեզի հիմնանորոգումը, համայնքի գազաֆիկացումը, երիտասարդների հետ տարվող աշխատանքների կազմակերպում, բնակիչների հանգստի պայմանների բարելավումը, ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը, համայնքի բնակավայրերի կառուցապատումը ,բարեկարգումը և կանաչապատումը:

Աղետների ռիսկերի նվազեցմանն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում,համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում, համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում,արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում:

3.4 Արաքս համայնքի ՀՀՋԾ Ֆինանսավորում

_Համայնքի սեփական եկամուտներ 12մլն դրամ

_արտաքին պաշտոնական դրամաշնորհներ 32մլն դրամ

4. ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՀՋԾ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՄՈՒՄ

2017թ.

ԾՐԱԳԻՐ1.

Հանդիսությունների սրահի կառուցման աշխատանքների շարունակում

ՆՊԱՏԱԿ- բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ 1.2017թվերսկսել հանդիսությունների սրահի անավարտ շինարարությունը և այն հանձնել շահագործման:

ԽՆԴԻՐ 2. 2018թհանդիսությունների սրահի համար ձեռք բերելանհրաժեշտ գույք:

ԾՐԱԳԻՐ 2.

Մշակույթի տան վերանորոգման աշխատանքներ

ՆՊԱՏԱԿ-Բնակչության կուլտուր կենցաղային պայմանների բարելաբում:

ԽՆԴԻՐ 1. 2017թՄշակույթի տան վերանորոգման աշխատանքները ավարտել հոկտեմբեր ամսին:

ԽՆԴԻՐ 2. 2017թՄշակույթի տան համար ձեռք բերել անհրաժեշտ գույք:

ԾՐԱԳԻՐ 3.

Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում

ՆՊԱՏԱԿ –Մանուկ երեխաների հանգստի կազմակերպում:

ԽՆԴԻՐ 1. 2017թ Սկսել մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքները, ըստ մարզային ծրագրերով նախատեսված միջոցների հաշվին:

ԽՆԴԻՐ 2. 2017թ Համայնքի բյուջեի միջոցներով ,սկսել մանկապարտեզի ներքին հարդարման աշխատանքները:

ԾՐԱԳԻՐ 4

Համայնքի գազաֆիկացում

ՆՊԱՏԱԿ -Բարելավել համայնքի բնակչության կենցաղային պայմանները

ԽՆԴԻՐ1. 2017թՁեռք բերել մարզպետարանի աջակցությունը համայնքի գազաֆիկացման աշխատանքները կազմակերպելու համար:

ԽՆԴԻՐ 2.Գազաֆիկացման աշխատանքները կազմակերպելու համար, բնակչությանը կազմակերպել և բացատրել ներդրումներ կատարելու մասին:

ԾՐԱԳԻՐ 5

Ներհամայնքային ճանապարհների նորոգում

ՆՊԱՏԱԿ-Վերացնել ներհամայնքային ճանապարհների անսարքությունները:

ԽՆԴԻՐ 1. 2017թ. հունիս-հուլիս ամիսներին կատարել ճանապարհների նորոգում,խորդուբորդությունների վերացում,խճացում և ջրերի հեռացում:

ԾՐԱԳԻՐ 6

Սպորտային հրապարակների նորոգում

ՆՊԱՏԱԿ-Զարգացնել սպորտային կյանքը:

ԽՆԴԻՐ1. 2017թ Սկսել սպորտային հրապարակների նորոգման աշխատանքները, կառուցել վոլեյբոլի և ձեռքի գնդակի խաղահրապարակներ:

ԽՆԴԻՐ 2. 2017թ սպորտային միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու համարանհրաժեշտ գույքի ձեռք բերում:

ԾՐԱԳԻՐ 7.

Ջրահեռացման ջրատարների կառուցում

ՆՊԱՏԱԿ- Բնակչության կենցաղային պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ 1 2017թՄաքրել ջրահեռացման ջրատարները,վերացնել

անսարգությունները,անհրաժեշտության դեպքում

նախատեսել նոր ջրատարերի կառուցում:

2018թ

ԾՐԱԳԻՐ 1

Մանկապարտեզի շենքերի հիմնանորոգում

ՆՊԱՏԱԿ- Երեխաների կենցաղային պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ 1 . 2018թՇարունակել մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները

ԽՆԴԻՐ 2.Ստեղծել նախադրյալներ մանկապարտեզը անհրաժեշտ գույքով

ապահովելու համար:

ԾՐԱԳԻՐ 2

Մշակույթի տան համար ստեղծել երգի -պարի համույթ.

ՆՊԱՏԱԿ –Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը

ԽՆԴԻՐ 1.Ստեղծել մշակույթի տան երգի- պարի համույթ:

ԽՆԴԻՐ 2.Մշակույթի տան համար անհրաժեշտ երաժշտական գործիքների ձեռք

բերում:

ԾՐԱԳԻՐ 3.

Համայնքի գազաֆիկացում

ՆՊԱՏԱԿ- Բնակչության կենցաղային պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ 1.Շարունակել գազաֆիկացման հարցի լուծման աշխատանքները, դիմել

կառավարության ակնկալելով օգնություն:

ԽՆԴԻՐ 2. Համաձայնություն ձեռք բերել հարևան համայնքների հետ:

ԽՆԴԻՐ 3. Դոնոր կազմակերպությունների և հովանավորների հայտնաբերում:

ԾՐԱԳԻՐ 4.

Գյուղատնտեսության շահութաբերության բարձրացում

ՆՊԱՏԱԿ-Գյուղատնտեսական հողերի բերքատվության աճ:

ԽՆԴԻՐ 1. 2018թ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության ,մարզպետարանի և համայնքապետարանի համատեղ ջանքերով ներմուծել ցորենի բարձրորակսերմացու:

ԽՆԴԻՐ 2.Վնասատուների դեմ պայքար կազմակերպելու,ցանքատարածությունները պարարտացնելու համար ձեռք բերել թունաքիմիկատներ և պարարտանյութեր:

ԽՆԴԻՐ 3. Օգնել բնակչությանը գյուղ. մթերքների իրացման հարցում:

ԾՐԱԳԻՐ 5.

Ակտիվ մշակութային կյանքի կազմակերպում

ՆՊԱՏԱԿԸ –Երիտասարդների ներգրավումը մշակութային կյանք:

ԽՆԴԻՐ 1 Կազմակերպել թատրոնի խմբակ համայնքի բնակիչներից,հրավիրել համույթների, երգի-պարի խմբակների:

ԾՐԱԳԻՐ 6.

Հասարակական տրանսպորտի կազմակերպում

ՆՊԱՏԱԿԸ- Բարելավել համայնքի բնակչության տրանսպորտային սպասարկումը:

ԽՆԴԻՐ 1. 2018թՀաստատել տրանսպորտային կապհամայնքի և մայրաքաղաքի միջև:

ԽՆԴԻՐ 2. 2018թ Ձեռք բերել մարզպետարանի աջակցությունը միջհամայնքային ճանապարհների վերանորոգման համար:

2019թ

ԾՐԱԳԻՐ1.

Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում

ՆՊԱՏԱԿ- Երեխաների կուլտուր կենցաղային պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ 1. 2019թ Ավարտել մանկապարտեզի շենքի հիմնավորման աշխատանքները և այն հանձնել շահագործման:

ԽՆԴԻՐ 2. 2019թ Մանկապարտեզի համար ձեռք բերել անհրաժեշտ անկողնային պարագաներ և խաղալիքներ:

ԾՐԱԳԻՐ 2.

Համայնքապետարանի շենքի կառուցում

ՆՊԱՏԱԿ - Համայնքապետարանի աշխատակիցների աշխատանքային պայմաններիիբարելավում, բնակչության բարձրորակ ծառայությունների կազմակերպում:

ԽՆԴԻՐ 1 2019թ Ձեռք բերել մարզպետարանի և կառավարության աջակցությունը,համայնքապետարանի նոր շենքի կառուցման համար:

ԽՆԴԻՐ 2. 2019թ Ստեղծել պայմաներ համայնքապետարանի համար նոր գույք ձեռքբերելուհաամար:

ԾՐԱԳԻՐ 3.

Բուժ. ամբուլատորիայի շենքի կառուցում

ՆՊԱՏԱԿ - Բնակչությանը բժշկական բարձր որակով սպասարկում:

ԽՆԴԻՐ 1. 2019թՀամայնքի և մարզպետարանի աջակցությամբ սկսել բուժ.ամբուլատորիայի շենքի կառուցման աշխատանքները:

ԽՆԴԻՐ 2. 2019թԱկնկալելով կառավարության և մարզպետարանի աջակցությունը, բուժ. ամբուլատորիան ապահովել բժշկական անհրաժեշտ

սարքավորումներով:

ԾՐԱԳԻՐ 2.

Համայնքապետարանի շենքի կառուցում

ՆՊԱՏԱԿ- համայնքապետարանի աշխատակիցների աշքատանքային պայմանների բարելավումը:

ԽՆԴԻՐ 1. 2019թ Ձեռք բերել մարզպետարանի և կառավարության աջակցությունը համայնքապետարանի նոր շենքի կառուցման համար:

ԽՆԴԻՐ 2. 2019թ Ստեղծել պայմանները համայնքապետարանի համար նոր գույք ձեռք բերելու:

ԾՐԱԳԻՐ 3.

Բուժ.ամբուլատորիայի շենքի կառուցում

ՆՊԱՏԱԿ- Բնակչությանը բժշկական բարձր որակով սպասարկում

ԽՆԴԻՐ 1. 2019թ համայնքի և մարզպետարանի աջակցությամբ սկսել բուժ.ամբուլատորիայի շենքի կառուցման աշխատանքները:

ԽՆԴԻՐ 2. 2019թ Ակնկալելով կառավարության և մարզպետարանի աջակցությունը,բուժ. ամբուլատրիան ապահովել բժշկական անհրաժեշտսարքավորումներով:

ԾՐԱԳԻՐ 4.

Ներհամայնքային ճանապարհների նորոգում

ՆՊԱՏԱԿ- Համայնքում տրանսպորտային միջոցների շահագործման բարելավում:

ԽՆԴԻՐ 1. 2019թ Մշտական ուշադրության կենտրոնում պահել ներհամայնքային ճանապարհների վիճակը, անհրաժեշտության դեպքում կատարել վերանորոգման աշխատանքներ:

ԾՐԱԳԻՐ 5.

Ոռոգման ջրի մատակարարում

ՆՊԱՏԱԿ - Գյուղատնտեսական մթերքների արտադրության աճ:

ԽՆԴԻՐ 1. 2019թ.Հասնել այն բանին, որ համայնքն ապահոված լինի ոռոգման ջրով:

ԽՆԴԻՐ 2. 2019թ.Համայնքի բնակչությանը ոռոգման ջրով ապահովելու հարցում, իր ուրույն դերն ունենա համայնքապետարանը:

ԽՆԴԻՐ 3. 2019թ.Նախատեսել նոր ջրատարների կառուցում:

ԾՐԱԳԻՐ 6.

Համայնքի սոցիալական պաշտպանություն

ՆՊԱՏԱԿ- Հաշմանդամների սոցիալապես անապահով ընտանիքների պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ 1. 2019թ Ավելացնել համայնքի բնակիչներին՝ հատկապես հաշմանդամներին և սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական միջոցներիհատկացումները:

ԽՆԴԻՐ 2. 2019թ Հաշմանդամների և անապահով ընտանիքների համար անցկացնել կուլտուր –կենցաղայի միջոցառումներ:

ԾՐԱԳԻՐ 7.

Գյուղատնտեսության զարգացման խթանում

ՆՊԱՏԱԿ –Գյուղ մթերքների արտադրության աճ:

ԽՆԴԻՐ 1. 2019թ Համայնքի բնակչությանը ապահովել անհրաժեշտ թունաքիմիկատներով, պարարտանյութերով և որակյալ սերմացուով:

ԽՆԴԻՐ 2. Բնակիչներին օգնել իրացման շուկաներ հայտնաբերելու:

2020թ

ԾՐԱԳԻՐ 1.

Գազաֆիկացում

ՆՊԱՏԱԿ-Բնակչության, կենցաղային պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ 1. 2020թ Շարունակել համայնքի գազաֆիկացման ծրագրի իրականացումը, հովանավորների և դոնոր կազմակերպությունների հայտնաբերումը:

ԽՆԴԻՐ 2. Համաձայնություն ձեռք բերել Հայկաշեն, Մեծամոր գյուղերի հետ, համայնքի գազաֆիկացման ընդհանուր ծրագիրիրականացման համար:

ԾՐԱԳԻՐ 2.

Մանկապարտեզի հիմնանորոգում

ՆՊԱՏԱԿ - Համայնքի մանկահասակ երեխաների հանգստի կազմակերպում:

ԽՆԴԻՐ 1. 2020թ Ավարտել մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները և այն հանձնել շահագործման և ապահովել անհրաժեշտ գույքով և հանդերցանքով:

ԾՐԱԳԻՐ 3.

Գյուղատնտեսության արտադրություն

ՆՊԱՏԱԿ -Ավելացնել գյուղ մթերքների արտադրությունը:

ԽՆԴԻՐ 1 2020թ Պարբերաբար համայնքի բնակչությանը ապահովել պարագաներով և թունաքիմիկատներով:

ԽՆԴԻՐ 2Օգնել բնակչությանը ստացված բերքի իրացման հարցում ,նոր շուկաների հայտնաբերում:

ԾՐԱԳԻՐ 4.

Համայնքապետարանի շենքի կառուցում

ՆՊԱՏԱԿ - համայնքի բնակչության հարմարավետ սպասարկում,ծառայությունների մատուցում:

ԽՆԴԻՐ 1. 2020թ ավարտել համայնքապետարանի շենքի կառուցումը և այն հանձնել շահագործման:

ԽՆԴԻՐ 2. Համայնքապետարանի համար ձեռք բերել ժամանակակից անհրաժեշտ գույք

ԽՆԴԻՐ 3. Ստեղծել նոր աշխատատեղեր:

ԾՐԱԳԻՐ 5.

Համայնքի էլ. ցանցի ընդլայնում

ՆՊԱՏԱԿ- Համայնքի ծայրամասերի բնակչությանը ապահովել անհրաժեշտ էլ . էներգիայով:

ԽՆԴԻՐ 1. 2020թ.Համայնքի և էլ. ցանցի ջանքերով (միջոցներով) կառուցել 1 ենթակայան:

ԽՆԴԻՐ 2.Էլեկտրական հին այուները փոխարինել նորերով:

ԽՆԴԻՐ 3. Համայնքի ծայրամասերում անցկացնել նոր հոսանքագծեր:

ԾՐԱԳԻՐ 6.

Ոռոգման ջրի ապահովում

ՆՊԱՏԱԿ –Գյուղատնտեսական ապրանքների արտադրության աճ:

ԽՆԴԻՐ 1. 2020թՀամայնքի ևՋՕՄԵՐԻ միջոցներով կառուցել նոր ջրատարներ:

ԽՆԴԻՐ 2.Վերանորոգել հին ջրատարները:

ԽՆԴԻՐ 3.Մարզպետարանի և կառավարության հետ ձեռք բերել համաձայնություն մակերեսային խորքային հորերի հորատման թույլտվություն:

ԾՐԱԳԻՐ 7.

Բուժ. ամբուլատորիայի շենքի կառուցում

ՆՊԱՏԱԿ - Մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում

ԽՆԴԻՐ 1. 2020թ Ավարտին հասցնել բուժ.ամբուլատորիայի շենքի կառուցումը և այն հանձնել շահագործման

ԽՆԴԻՐ 2. Բուժ. ամբուլատորիայի համար ձեռք բերել անհրաժեշտ բժշկական սարքավորումներ և դեղորայք

ԾՐԱԳԻՐ 8.

Ջրահեռացման գծերի կառուցում

ՆՊԱՏԱԿ - Ընդլայնել համայնքի ջրահեռացման ցանցը կենցաղային պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ 1. 2020թ Համայնքի ծայրամասերում կառուցել նոր ջրահեռացման ջրատարներ:

ԽՆԴԻՐ 2. Պարբերաբար կատարել ջրահեռացման ջրատարների մաքրման աշխատանքներ:

2021թ

ԾՐԱԳԻՐ 1.

Գազաֆիկացում

ՆՊԱՏԱԿ – Բնակչության կենցաղային պայմանների բարելավում

ԽՆԴԻՐ 1. 2021թ Ավարտին հասցնել համայնքի գազաֆիկացման աշխատանքները և այն հանձնել շահագործման :

ԾՐԱԳԻՐ 2.

Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում

ՆՊԱՏԱԿ – Բարելավել բնակչության տրանսպորտային սպասարկումը:

ԽՆԴԻՐ 1. 2021թ Մարզպետարանի և կառավարության հետ ձեռք բերել համաձայնություն Արաքս Ռանչպար ճանապարհը վերանորոգելու և շահագործմանհանձնելու:

ԾՐԱԳԻՐ 3.

Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում

ՆՊԱՏԱԿ- Համայնքում ծնելիության աճի բարձրացում:

ԽՆԴԻՐ 1. 2021թ Համայնքում ծնելիությունը խթանելու համար սահմանել ծնելիության նպաստ յուրաքանչյուր երեխայի համար:

ԾՐԱԳԻՐ 4.

Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում:

ՆՊԱՏԱԿ – Ապահովել բնակչությանը աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ ճիշտ կողմնորոշվելու և գույք օգտագործելու իմացությունը:

ԽՆԴԻՐ 1. Բնակչության հետ կազմակերպել դասընթացներ,տանել բացատրական աշխատանքներ, կազմել տարհանման և էվակուացման պլաններ, անցկացնել վարժանքներ ստուգելու համայնքի բնակչության ունակությունները:

ԽՆԴԻՐ 2. Ստեղծել աղետներից պաշտպանվելու կառույցներ, ձեռք բերել քաղ.պաշտպանության գույք և բնակչության պաշտպանականմիջոցներ:

ԾՐԱԳԻՐ 5.

Գյուղատնտեսության շահույթաբերության զարգացում

ՆՊԱՏԱԿ-Բարձրացնել գյուղատնտեսական հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:

ԽՆԴԻՐ 1. ՀՀգյուղատնտեսության նախարարության մարզպետարանի գյուղապետարանի միջոցներով համայնք ներմուծել բարձորակ սերմացու ցորեն առվույտ կարտոֆիլ և այլն:

ԽՆԴԻՐ 2. Հողի սեփականաշինորումից չօգտված ընտանիքներին 2021թ-ի ընթացքում հատկացնել վարձակալական հողատարածքներ պայմանագրային հիմունքներով:

ԾՐԱԳԻՐ 6.

Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը, կանաչապատումը, աղբահանությունը սանիտարական մաքրումը գերեզմանոցների պահպանում

ՆՊԱՏԱԿ- Համայնքը բարեկեցիկ հանգստյան գոտի դարձնել:

ԽՆԴԻՐ 1. Պարբերաբար կատարել կանաչապատման աշխատանքներ հատկապես մշակույթի տան, մանգապարտեզի , դպրոցի, գյուղամիջյան ճանապարհները հատող տարածքներում:

ԽՆԴԻՐ 2. Շարունակական դարձնել և մշտական ուշադրության կենտրոնում պահել աղբահանությունը, նախաձեռնել լրացուցիչ աղբաթափության վայր:

ԽՆԴԻՐ 3. Հաճախակի կազմակերպել համայնքի գերեզմանատան մաքրման աշխատանքներ շաբաթօրյակների տեսքով:

ԽՆԴԻՐ 4. Համայնքի բնակչության հանգստի համար կանաչապատել հանգստի գոտիները և կատարել անհրաժեշտ կառուցապատման աշխատանքներ:

ԾՐԱԳԻՐ 7.

Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն

ՆՊԱՏԱԿ- Բնակչության սոցիալական խնդիրների լուծում,սոցիալական պայմանների բարելավում:

ԽՆԴԻՐ 1. 2021թ Առանձնակի ուշադրություն դարձնել հաշմանդամների և

սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն տրամադրելու հարցերին:

ԽՆԴԻՐ2. Հասնել նրան որ յուրաքանչյուր հաշմանդամ և անապահով ընտանիք , համայնքի բնակիչ իմանա, որ համայնքապետարանը դժվար պահերին միշտկանգնած կլինի իրենց կողքին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը այդ թվում

ա) Անհատական տնտեսություններ – 530

բ) Կոլեկտիվ տնտեսություններ –

գ) պետական տնտեսություններ –

2. Ցանկատարածություններ, ընդամենը (հա)ըստ կուլտուրաների

Կերային կուլտուրաներ -100

3. Անասնագլխաքանակ (գլուխ)

ա) Խոշոր եղջերավոր անասուններ-214

բ) Խոզեր-156

գ) Ոչխարներ և այծեր-

դ) Թռչուններ-1912

4. Գյուղատնտեսական արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրության և սպառման հաշվեկշիռ.

ա բանջարեղեն-15000տ

բ միս-50տ

գ.գբոստանային կուլտուրաներ-1500տ

5.Գյուղատնտեսական մեքենաների թիվը

ա)ըստ համայնքային սեփականության-1

բ)ըստ մասնավոր սեփականության -11

ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

-Համայնքի սեփական եկամուտներ 11963,0 հազար

-Արտաքին պաշտոնական դրամաշինորներ 31295,7 հազար

-Այլ եկամուտներ ?

ՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀԶԾ պետք է ենթարկվի մոնիթորինգի, մոնիթորինգը կառավարչական գործիք է , որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրի կատարման ընթացքը և անհրաժեշտփոփոխություններ:

ՀՀԶԾ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո ՀՀԶԾ –ն հրատարակվում է համայնքի բնակչության համար, առավել մատչելի դարձնել այն: Պատրաստվում նհրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկություններ ու գրքույկներ:

ՀՀԶԾ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ՀՀԶԾ –Ի իրականացման ընթանուր պատասխանատուն համայնքի ղեկավարն է: Համայնքի ավագանու կողմից ՀՀԶԾ –ի ընդունումով հաստատվում են ՀՀԶԾ-ում ներառված բոլոր ոլորտային միջոցառումները, ըստ ժամկետների, ֆինանսավորման և կատարման պատասխանատուների:

ՀՀԶԾ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՀԶԾ իրականացումը պետք է գնահատվի և պատասխանի հետևյալ հարցերին:

-Ինչպես է իրականացվել կամ իրականացվում:

-Ինչ ազդեցություն է այն ապահովել

-Արդյոք ստացված արդյունքներն արդարացնում են այն ծախսերը, որոնք իրականացվել են արդյունքներն ապահովելու համար :

Հ Հ Զ Ծ ԿԱԶՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԸ

ՀՀԶԾ-ն համայնքի տեսլականի, նպատակների , ձգտումների և ջանքերի ամփոփումն է մեկ փաստաթղթում:

ՀՀԶԾ –Ն արտացոլում է այն հարցերը, որոնք համայնքի բնակչության տեսանկյունից առավել կարևոր են:

Համայնքի բնակիչները պետք է ՀՀԶԾ –ի նկատմամբ սեփականության զգացում ունենան,պատասխանատվություն կրեն և բոլոր ջանքերը ներդնեն ծրագրում ներառված միջոցառումների իրականացման համար:

ՀԱՏՎԱԾ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Տողի N	Եկամուտներ	Հոդված NN	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
1	2	3	4	5	6	7	8
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ (տող1100 +տող 1200 +տող +1300)		43258.7	44258.7	45258.7	46258.7	47258.7
	այդ թվում՝						
1100	1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7100	10503.0	10803.0	11103.0	11403.0	11703.0
	(տող 1110+տող +1120+ տող+1130 +տող+ 1150+տող +1160)						
-	այդ թվում՝						
1110	1.1Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	6782.3	6782.3	6882.3	6882.3	6882.3
	այդ թվում՝						
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներումգտնվող շենքերի և շինությունների համար		180.0	185.0	190.0	195.0	200.0
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար						
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	3520.5	3620.5	3720.5	3820.5	3920.5
	այդ թվում՝						
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար						
1130	1.3Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացմ անթույլավության վճարներ	7145	560.0	565.0	570.0	575.0	580.0
	այդ թվում՝						
1131	Տեղական տուրքեր	7152	560.0	565.0	570.0	575.0	580.0
	(տող1132+տող+1135+տող+1136+տող+1137+տող+1138+տող 1139+տող+1140+տող1141+տող1142+տող1143+ տող1144+տող+1145)						

1132	ա)Համայնքի տարածքում նոր շենքերի,շինությունների(տեղադրման)թույլատվության համար(տող1133+տող+1334)		360.0	365.0	370.0	375.0	380.0
	որից՝						
1133	աա)Հիմնական շինությունների համար						
1134	աբ)Ոչ հիմնական շինությունների համար						
1135	բ)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, արդիականացման, աշխատանքներ (բացառությանբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) կատարելու թույտվության համար						
1136	գ)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների ,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար						
1137	դ) Համայնքի տարացքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		180.0	185.0	190.0	195.0	200.0
1138	ե)Համայնքի տարացքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար						
1139	զ)համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի տույլտվության համար						
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի , շահումովխաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները),						

	խաղատները ժամը 24.00-ից հետոաշխատելուհամարթույլտվությանհամար						
1141	ը) Համաքաղաքային կանոններինհամապատասխանԵրևանքաղաքի և քաղաքայինհամայնքներիտարածքումընտանիկիենդանիներ պահելու թույլտվության համար						
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին զովազդ տեղադրելու թույլտվության համար						
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնորինակներ տրամադրելու համար						
1144	ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների)մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար						
1145	ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առու վաճառքի թույլտվության համար						
1150	**1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ**	**7146**					
	այդ թվում՝						
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր						
	(տող1152+տող1153)						
	այդ թվում՝						
1152	ա)Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգման կապակցությամբ վկայականներ տալու համար						

1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի պատճեներ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար						
1160	1.5 Այլ հարկային եկամուտներ	7161					
	(տող1161+տող1165)						
	այդ թվում՝						
1161	օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ						
	(տող 1162+տող1163+տող1164)						
1162	ա) Եկամտահարկ						
1163	բ) Շահութահարկ						
1164	գ) Օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները՝ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով						
1165	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ						
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՀՆՈՐՀՆԵՐ	7300	31295.7	32251.6	33206.6	34161.6	35116.6
	(տող 1210+տող 1220+տող 1330+ տող 1240 +տող 1250 + տող1260)						
	այդ թվում՝						
210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշհնորհներ՝ ստացված այլ պետություններից	7311	31295.7	32251.6	33206.6	34161.6	35116.6
	այդ թվում՝						

1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշհնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով						
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշհնորհներ՝ ստացված այլ պետություններից	7312					
	այդ թվում՝						
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշհնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով						
	այդ թվում՝						
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացբած միջազգային կազմակերպություններից						
	այդ թվում՝						
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինասավորման նպատակով						
1240	2.4Կապիտալ արտաքին պատոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	7322					
	այդ թվում՝						
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալծախսերի ֆինանսավորման նպատակով						

1250	2.5Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7331					
	(տող1251+տող1254+տող1257+տող1258)						
	որից՝						
1251	ա)Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող այլ դոտացիաներ						
1254	բ)Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ						
	այդ թվում՝						
1255	բա)Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրառման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ						
1256	բբ)Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ						
1257	գ)Պետականբյուջեիցհամայնքիվարչականբյուջեինտրամադրվողնպատակայինհատկացումներ(սուբվենցիաներ)						
	այդ թվում՝						
1258	դ)Այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ						
1259	Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից						
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից						
	(տող1261+տող1262)						
	այդ թվում՝						

1261	ա)Համայնքի բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)						
1262	բ)Այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ						
	որից՝						
1263	Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից						
1300	3.ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7400	1100.0	1200.0	1300.0	1400.0	1500.0
	(տող1310+տող1320+տող1330+տող1340+տող1350+տող1360+տող1370+տող 1380+տող1390)						
	Այդ թվում՝						
1310	3.1 Տոկոսներ	7411					
1311	Բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ						
1320	3.2 Շահաբաժիններ	7412					
	Այդ թվում՝						
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե մուտքագրվող շահաբաժիններ						
1330	3.3Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	1100.0	1200.0	1300.0	1400.0	1500.0
	(տող1331+տող1332+տող1333+1334)						
	Այդ թվում՝						
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		200.0	250.0	300.0	350.0	400.0
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		900.0	950.0	1000.0	1050.0	1100.0
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և						

	համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ						
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	7421					
1340	**3.4 Համայնքի բյուջեի եկամուտնե ր ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից**						
	(տող 1341 + տող +1342 + տող 1343)						
	այդ թվում՝						
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող , այդ թվում՝ տիրազուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պատուհաններում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր						
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ						
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	7422					
1350	**3.5 Վարչական գանձումներ**						
	(տող 1351 + տող 1352)						
	այդ թվում						
1351	տեղական վճարներ						
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	7431					
1360	**3.6 Մուտքեր տույժերից տուգանքներից**						

	(տող 1361 + տող 1362)						
	այդ թվում՝						
1361	Վարչական իրավախաղտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ						
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող գծով տույժերից	7441					
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ						
	(տող 1371+ տող 1372)						
	այդ թվում՝						
1371	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին , վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի հիմնական միջոցով կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից						
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին ,վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի հիմնական միջոցով կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից	7442					
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ						
	(տող 1381 + տող 1382)						
	այդ թվում՝						

1381	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոցով կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից						
1382	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից	7451					
1390	3.9 Այլ եկամուտներ						
	տող 1391+ տող 1392 տող 1393						
	այդ թվում՝						
1391	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխատուցումից մուտքեր						
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջեկատարվող հատկացումներից մուտքեր						
1393	Օրենքով և այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ						

Արաքս համայնքի ղեկավար՝ / / Վ.Գրիգորյան

Պարտադիր խնդիր	Բյուջետավորված միջոցներ	Ծրագրի կ	
		2017	2018
1.Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում			
2.Համայնքի գույքի և ղրամական միջոցների կառավարում	7500,0	1500,0	1500,0
3.Նախադպրոցական և արտադպրոցական դաստիրակություն			
4.Ակտիվ մշակույթային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության եռգրավմամբ	4310,0	800,0	850,0
5.Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն	22500,0	4500,0	4500,0
6.Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը	4000,0	700,0	750,0
7.Համայնքում բնակարանային շինարարության խթանումը			
8.Համայնքի բնակավայրերի կառուցապատումը,բարեկարգումը և կանաչապատումը,համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը,կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը	27500,0	5000,0	5200,0
9.Համայնքի հասարակական տրանսպրտի աշխատանքի կազմակերպում, համայնքի ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում			

-25-

10.Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը	3000,0	600,0	600,0
11.Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում	1640,0	300,0	320,0
12.Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը	2500,0	500,0	500,0
13.Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում			
14.Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում	2500,0	500,0	500,0
15.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում	1000,0	200,0	200,0
17.Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում	1000,0	200,0	200,0
18.Բարեգործության խթանում			

ՀՀ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
(Արաքս համայնք) (2017-2021թթ.)

ստարումն ըստ տարիների			Ֆինանսավորման աղբյուրներ/դրամ/						
2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն/ նվիրատվություն	Պետություն-համայնք մասնավոր հատված	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր
1500,0	1500,0	1500,0	3000,0		4500,0				7500,0
870,0	890,0	900,0	2000,0		2310,0				4310,0
4500,0	4500,0	4500,0	2000,0		2500,0				22500
800,0	850,0	900,0	2000,0		2000,0				4000,0
5500,0	5800,0	6000,0	12500,0		15000,0				27500,0

600,0	600,0	600,0	400,0		200,0				3000,0
3300,0	340,0	350,0	640		1000,0				1640,0
500,0	500,0	500,0	1500,0		1000,0				2500,0
500,0	500,0	500,0	1500,0		1000,0				2500,0
200,0	200,0	200,0	400,0		600,0				1000,0
200,0	200,0	200,0	600,0		400,0				1000,0
200,0	200,0	200,0	600,0		400,0				1000,0

Ծախսերի դասեր		ֆինանսավորում
Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ
	այո	
	այո	
	այո	
	այո	

	ulm	
	ulm	
	ulm	
	ulm	
	ulm	
	ulm	
	ulm	